ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

(Պրոֆ. Հմայակ Հարությունյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

XX հարյուրամյակում հայ իրականության մեջ հանդես եկավ տաղանդավոր հայագետների, մանկավարժների ու հասարակական գործիչների մի փայլուն համաստեղություն, որի առաջին շարքերում փայլատակեց Համո Հարությունյանի անունը:

Համո (Հմայակ) Ավետիսի Հարությունյանը ծնվել է 1907 թվականին, Արևմտյան Հայաստանի Վանի վիլայեթի, Վանա լճից ոչ հեռու գտնվող Լամզկերտ չքնաղ գյուղում: Նրա մանկությունն ու պատանեկությունը անցել է չքավորության ծանր ու անտանելի պայմաններում: Վաղ հասակից զրկվել է հորից և մնացել մոր խնամքին: Շատերի հետ տեսել ու զգացել է թուրքական բիրտ իրականության բոլոր սարսափները, հայաջինջ քաղաքականության դաժանությունների կոնկրետ դրսևորումները:

1915 թ. ցեղասպանության արյունոտ ճիրաններում հայտնվում է նաև նրանց գերդաստանը: Ջարդերից խուսափելու նպատակով 1915 թ. ապրիլին փոքրիկ Հմայակը մոր և եղբայրների հետ փախչելով Լամզկերտից, պատսպարվում են Վան քաղաքում ու ակամայից մասնակից լինում Վանի հայության ջանքերով կազմակերպված Ապրիլյան հերոսամարտին: Վանի հերոսամարտի հաղթական ավարտից հետո ռուսական զորքերի սկսած նահանջի պատճառով, Վանի հայությունը բռնում է գաղթի ճանապարհը: 1915 թ. հուլիսին, Հմայակը մոր և եղբայրների հետ անցնում է Պարսկաստան, այնուհետև՝ Իրաք, ապա տեղափոխվում Կովկաս՝ Երևանի նահանգ. ընտանիքը ծանր պայմաններում ապրում է նախ Էջմիածնում, ապա՝ Երևանում:

1925 թ. Հ. Հարությունյանը ավարտում է միջնակարգ դպրոցը և նույն թվականին էլ նշանակվում է Նոր Ախտայի (Հրազդան) շրջանի Գյումուշ և Արզաքանդ (Արզական) գյուղերի դպրոցներում որպես ուսուցիչ և դպրոցի վարիչ:

1929 թ. Հ. Հարությունյանն ընդունվում է Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետ, որը գերազանց առաջադիմությամբ ավարտում է 1933 թ.: 1933–36 թթ. նա ուսումնառում է ԵՊՀ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդի պատմություն» մասնագիտությամբ: 1939 թ. բացառիկ հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը՝ «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը» թեմայով: 1940 թ. նրան շնորհվում է դոցենտի կոչում:

1940 թ. Հ. Հարությունյանը նշանակվում է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի պատմության և նյութական մշակույթի ինստիտուտի գիտական աստիճաններ և կոչումներ շնորհող մասնագիտացված առաջին խորհրդի գիտական քարտուղար: Խորհրդի կազմի մեջ էին մտնում անվանի հայագետներ Հովսեփ Օրբելին, Հակոբ

Մանանդյանը, Խաչիկ Սամվելյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Հովհաննես Կուսիկյանը, Վահան Ռշտունին, Ստեփան Լիսիցյանը, Գարեգին Լևոնյանը և ուրիշներ: Միաժամանակ նա ստանձնում է ՀՍՍՀ Ժողկոմխորհին կից Հայկական հին ձեռագրերի հրատարակման հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի պաշտոնը՝ իր համեստ ավանդը ներդնելով հայոց հին ձեռագրերի փառահեղ պահոցի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի հիմնադրման գործում:

1945 թ. ամռանը, երբ խորհրդային կառավարության կողմից օրակարգի հարց էր դարձել Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ սկսելու պահանջը, Հ. Հարությունյանը նշանակվում է Գլխավոր շտաբին կից Արևմտյան Հայաստանի տարածքների նվաճման գլխավոր մասնագետ-խորհրդական:

Գիտական ակնառու և բազմակողմանի գործունեության համար 1966 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը հիմնավորապես զբաղվել է Հայաստանի հին, միջնադարյան և նոր ժամանակների պատմության հանգուցային հարցերի ուսումնասիրությամբ: Նա հեղինակ է մի քանի տասնյակի հասնող գիտական ուշագրավ ուսումնասիրությունների, որոնք վերաբերում են հայոց պատմության վերոնշյալ ժամանակաշրջանների կարևորագույն խնդիրներին:

1930–60-ական թվականներին լույս են տեսնում նրա « «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը», «Հայոց գրերի ստեղծման պատմությունը», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի էջերից», «Հայաստանը արաբական տիրապետության ժամանակ», «Հայաստանը Արշակունիների ժամանակ», «Իսրայել Օրի», «Հայաստանը 9–11-րդ դարերում», «Հայ ազատագրական պայքարը պարսկական տիրապետության դեմ 5-րդ դարում», «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի ստեղծումը», «Ավարայրի ճակատամարտը», «Վարդանանց պատերազմը», «Հայաստանը 6-րդ դարում և 7-րդ դարի առաջին կեսին» և այլ աշխատություններ, որոնք կարևոր ավանդ են հայագիտության և մասնավորապես, հայ պատմագիտական մտքի ոլորտում:

Հ. Հարությունյանի աշխատություններին բնորոշ են աղբյուրների և աղբյուրագիտական գրականության բարեխիղճ, համակողմանի ուսումնասիրությունը: Քննարկված հիմնահարցերի լուսաբանման ընթացքում անվանի գիտնականը հանդես է գալիս որպես իր ժամանակի ճշմարիտ, հայրենասեր:

Խորհրդային իշխանության առավել ռեակցիոն տարիներին, երբ արգելված էր հայոց պատմության դասավանդումը դպրոցներում, Հ. Հարությունյանը դարձավ իր ժողովրդի պատմության ճշմարիտ և ոգեշունչ քարոզիչներից մեկը: Նրա գիտելիքները հայրենի պատմության փաստական տվյալների բնագավառում, պերճախոս դասախոսությունները, ժամանակագրական և կարևոր դեպքերն ամբողջովին հիշողությամբ վերարտադրելը զարմանք է պատճառել բոլորին: Ինչպես մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազն է նշում՝ «Նա հայ ժողովրդի պատմության հետաքրքրական դրվագները այնպես է ներկայացնում, որ կարծես ինքը ներ-

կա ու ականատես է եղել այդ անցուդարձերին և հենց այդ պահին այնտեղից է ժամանել մեզ մոտ»[1]:

Հ. Հարությունյանի մանկավարժական և գիտական գործունեության շուրջ 50 տարիները սերտորեն առնչվում են Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հետ, որտեղ նա վարել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի առաջին վարիչի (1934–37, 1940–1950 թթ.) և պատմության ֆակուլտետի առաջին դեկանի (1936–50 թթ.) պատվավոր ու պատասխանատու պաշտոնները: Հայոց պատմության նորաստեղծ ամբիոնում նրան հաջողվում է իր շուրջը համախմբել ժամանակի ճանաչված պատմաբաններ Մկրտիչ Ներսիսյանին, Կարո Ղաֆադարյանին, Զավեն Գրիգորյանին, Մորուս Հասրաթյանին, Վարդան Պարսամյանին, Սուրեն Երեմյանին և այլոց:

Պրոֆ. Հ. Հարությունյանը շուրջ կես դար շարունակ դասավանդել է հանրապետության բարձրագույն այլ կրթօջախներում, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանում, Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում և այլուր, ուր գիտականորեն մշակել և հմուտ մակավարժի բարեխղճությամբ ունկնդրի սեփականությունն է դարձրել հայ ժողովրդի պատմության բազմադարյան, ամբողջական ընթացքը:

Անուրանալի է Հ. Հարությունյանի վաստակը երիտասարդ, խոստումնալից կադրեր պատրաստելու ուղղությամբ:

Նրա դասախոսություններն են ունկնդրել հայագիտության, հայ մշակույթի, գրականության երախտավորներ Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Հրանտ Մաթևոսյանը, Վարազդատ Հարությունյանը, Ծատուր Աղայանը, Գևորգ Ղարիբջանյանը, Հայկազ Պողոսյանը, Բաբկեն Առաքելյանը, Խորեն Պալյանը, Աշոտ Հարությունյանը և շատ ուրիշներ:

Երախտաշատ գիտնականն ու մանկավարժն արժանացել է հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել «Պատվո նշան» շքանշանով, պատվոգրերով և մեդալներով:

Անբասիր մտավորական, վաստակաշատ պատմաբան, պրոֆեսոր Համո Հարությունյանի բարի անունն ու պատկառելի վաստակը հարատև կմնա երախտագետ սերունդների հիշողության մեջ:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

---

[1] *Գ. Հ ա կ ո բ յ ա ն. Դրվագներ մեծերի կյանքից.– «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1986, № 3, էջ 13:*